

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-0-3_Ա

ք. Երեւան

22.03.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի մարտի 12-ի նիստում քննարկեց արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից 21.12.2012թ.-ին ներկայացված միջազգային գրանցման IR1084240 «PALOMA» ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մերժման որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի հայտը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 107-րդ մասի 14-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված "Paloma" բառային ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել գերմանական "BORCO-MARKEN-IMPORT Matthiesen GmbH & Co. KG" ընկերությանը պատկանող և

ինտերնետում գովազդվող "Paloma" ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքի համաձայն՝ Գերմանական ընկերության ապրանքային նշանը, որը գրանցված չէ Հայաստանում, օգտագործվում է միայն գրեյպֆրուտի լիմոնադի համար, որը 32-րդ դասի ապրանք է: Համացանցում, ներառյալ BORCO-ի կայքը, չկա որևէ տեղեկատվություն այն մասին, որ Paloma նշանը BORCO-ի կողմից երբևէ օգտագործվել է լիմոնադից բացի ուրիշ ապրանքի վրա: Փորձաքննությունն էլ չի մատնանշել այդպիսի դեպք:

Հայտարկված նշանը ներկայացված է ԱԾՄԴ 33-րդ դասի զանազան ակոհոլային խմիչքների համար: Հայտնի է, որ ակոհոլային խմիչքները և լիմոնադը նույնատիպ ապրանքներ չեն համարվում: ՀՀ ՄՍ գործակալությունն էլ 32-րդ և 33-րդ դասի ապրանքները չի համարում նույնատիպ: Պատճառն այն է, որ ակոհոլային և ոչ ակոհոլային խմիչքներն ունեն տարբեր բնույթ, միմյանց չեն փոխարինում, միմյանց հետ չեն մրցում, օգտագործվում են տարբեր նպատակների համար: Այսպիսով, եթե հակադրված նշանը գրանցված լիներ Հայաստանում 32-րդ դասի համար, այն չէր հակադրվի 33-րդ դասում հայտատուի ներկայացրած նշանին, այսինքն չէր կիրառվի օրենքի 10(1)(1) կամ 10(1)(2) հոդվածը: 10(4)(3) հոդվածի կիրառման շեմը չի կարող ավելի ցածր լինել: Ըստ այդ հոդվածի՝ նշանի գրանցումը մերժվում է, եթե այն «կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է...»: Շփոթություն չի կարող առաջանալ ոչ նույնատիպ ապրանքների դեպքում: Հետևաբար, ապրանքների նույնատիպությունը 10(4)(3) հոդվածի կիրառման նախապայմաններից մեկն է, ինչպես և 10(1)(1) և 10(1)(2) հոդվածների դեպքում:

Ոչ նույնատիպ ապրանքների դեպքում շփոթություն միգուցե առաջանար, եթե հակադրված նշանը Հայաստանի Հանրապետությունում ունենար բարի համբավ. տվյալ դեպքում չկա որևէ հիմք կարծելու, թե Paloma լիմոնադը ՀՀ-ում հայտնի է կամ որ ընդհանրապես օգտագործվել է:

Բողոքարկողը եզրակացնում է, որ օրենքի 10(4)(3) հոդվածն այս դեպքում կիրառելի չէր: Հայտատուի բարեխղճությունը երևում է նաև հետևյալ փաստերից: «Կորլետ» ԲԲԸ-ն մտնում է ուկրաինական «Баядера» հոլդինգի մեջ, որի անդամ է նաև ООО «Алкобольные Традиции» ընկերությունը (վերջինս առավել հայտնի է իր Хлебный Дар բրենդով): «Կորլետ»-ն հիմնվել 1982թ.-ին, տարեկան արտադրում է ավելի քան 45 մլն գինու և վերմուտի շիշ: Մանրամասների համար տե՛ս www.nat.ua/ru/about: PALOMA ապրանքանիշի ներքո հայտատուն վերմուտ է արտադրում 2010թ.-ից:

Վերոգրյալից ելնելով՝ բողոքարկողը եզրակացնում է Հայտատուի փորձը իր Paloma ապրանքանիշի համար պահպանություն ստանալ նաև Հայաստանում չի կարող որակվել որպես այլ ապրանքի համար օգտագործվող, ոչ հայտնի գերմանական Paloma-ի յուրացման փորձ: Հետեւաբար բողոքարկողը խնդրում է չեղյալ ճանաչել կրկնական փորձաքննության որոշումը և իրավական պահպանություն տալ № 1084240 միջազգային գրանցմանը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքը՝ բողոքը մերժելու եւ փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ՝ հաշվի առնելով այն, որ ապրանքային նշանների հայտարկվածի եւ գերմանական ընկերության կողմից օգտագործվողի տարբեր դասերին պատկանելը հիմք չի կարող լինել, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը ապրանքների նույնատիպության պայման չի պարունակում, ինչպես նաև մերժված ապրանքային նշանով ապրանքը տեղական արտադրողի մոտ շփոթություն կարող է առաջացնել գերմանական ընկերության կողմից արտադրվող ապրանքի նկատմամբ:

Քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը պարզեց, որ բողոքարկողի կողմից ներկայացված փաստարկները բավարար էին առ այն, որ Հայտատուն չի գործել անբարեխիղճ եւ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը չի կարող հիմք հանդիսանալ մերժման համար:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից միջազգային գրանցման IR1084240 «PALOMA» ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մերժման որոշման դեմ բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչել եւ ապրանքային նշանին իրավական պահպանություն տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ

Գ. Մելքոնյան